ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով ՀՀ կառավարության 02.08.2018թ. թիվ 878-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 7-րդ կետով սահմանված դրույթները՝ որպես ՀՀ պետական վերահսկողական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) սոցիալական ոլորտի վերահսկողության վարչության փորձագետ 12.01.2024թ.-12.07.2024թթ. ժամանակահատվածի ընթացքում ընդգրկված եմ եղել Ծառայության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների ոլորտների վերահսկողության վարչության ուսումնասիրություններում մասնավորապես՝

1. Խմբի կազմում մասնակցել եմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեում իրականացված ուսումնասիրության աշխատանքներին, մասնավորապես ուսումնասիրել եմ թվով 3 շինարարական օբյեկտներ (դպրոց և մարզադահլիճներ) կառուցման շինարարական աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ նախահաշիվները և կատարել եմ հսկիչ չափագրումներ:

2. Մասնակցել եմ Արարատի համայնքապետարանում իրականացված ուսումնասիրության աշխատանքներին, մասնավորապես՝ ուսումնասիրել եմ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կատարված շինարարական աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ նախահաշիվները և կատարել եմ հսկիչ չափագրումներ:

3. Խմբի կազմում մասնակցել եմ «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամում իրականացվող ուսումնասիրության աշխատանքներին կատարել եմ հսկիչ չափագրումներ:

4. Խմբի կազմում մասնակցել եմ ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմում իրականցվող ուսումնասիրության աշխատանքներին, մասնավորապես՝ ուսումնասիրել եմ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում կատարված շինարարական աշխատանքների նախագծա-նախահաշվային փաստաթղթերը, ծավալաթերթ նախահաշիվները և կատարել եմ հսկիչ չափագրումներ:

Բացի այդ, աջակցել եմ սոցիալական ոլորտի վերահսկողության վարչության գործառույթների շրջանակներում իրականցվող այլ աշխատանքներին:

ՀՀ ՊՎԾ սոցիալական ոլորտի վերահսկողության վարչության փորձագետ

Սևակ Խեչոյան
11.07.2024թ.